

համար, այն ալ Սպարթալեան
է փէնտին է և ոչ այլ ոք: Գի-
տենք թէկ, որ տակաւին ժա-
մանակն հասած չէ մեր ժողո-
վորդին հասկըցունելու թէ, Հի-
ւանդանոցի մը փառաւորութենէ
և հոյակապութենէ առաջ՝ ուրիշ
հաստատութեանց փառաւորու-
թիւն և հոյակապութիւն պէտք
է մեզի համար, սակայն որքան
ալ յանդուգն թուի մեր կարծի-
քը կամ մեր համոզումը, չըպի-
տի գեղեխնք ըսելու որ, Գեր.
Սրբազնը՝ Սպարթալեան Հարա-
զատներն Հիւանդանոցի նորո-
գութեան ներշնչելով Մեծ ԴԱՅՑ
մը չըրաւ: Գործին մեծութեան
փառքն Սպարթալեան եղբարց
կը պատկանի և ոչ Մուրատեանց
Սրբազնի, Մուրատեանց այն
ատեն դափնեայ պսակներու ար-
ժանի կըլլար, այն ատեն իրաւունք
կ'ունենար Հիւանդանոցի և Եկե-
ղեցւոյ ամբողջ պատուարներուն
վրայ իր անունը քանդակել տա-
լու, երբ Ազգն արդէն ամեննեին
ունեցած չըլլար այդ Հիւանդա-
նոցն ու Եկեղեցին և այդպիսի
հիմնարկութիւն մ'ընելու համար
ամեն ճգունք և աշխատանք յան-
ձին առնելով՝ ժողովուրդը կամ
որ և է մեծատուն հարուստ մը
յորդորելէ զատ, թեմերն ու այլ-
ուր շրջադայելով հանդանակէր,
նման Լատինաց այն երջանկայի-
շատակ Մօնսինեօս Սրբաքրա Բի-
էթրայի, որ անտանելի ճիգ ու
քրտինք թափելով, ամիսներ ու
տարիներ, վիճակէ վիճակ, դիւ-
զէ գիւղ և քաղաքէ քաղաք
դարձաւ հանդանակելով և վեր-
ջապէս այն հսկայ Սէն Ժան և
կեղեցին կանգնելու յուջուցել-
Այս կէտն ալ անցնինք և հաս-
կըցունենք միտքերնիս, թէ ին-
չու համար Հիւանդանոցի մը
փառաւորութենէ և հոյակապու-
թենէ առաջ՝ ուրիշ հաստատու-
թեանց փառաւորութիւն պէտք
էր մեզի համար, ըսինք:

Հիմայ ենթադրենք և հաս-
կըցունենք միտքերնիս, թէ ին-
չու համար Հիւանդանոցի մը
փառաւորութենէ և հոյակապու-
թենէ առաջ՝ ուրիշ հաստատու-
թեանց խօսքերով յորդորեց
զանոնք ատոր իրականացման:
Զայս ընդունելով՝ կը հարցու-
նենք մեր Գեր. Ս. Առաջնորդին
թէ, Հիւանդանոցի վերանորո-
գութիւնն աւելի զդալի էր, եթէ
ոչ Հոփիսիմեան և Մեսրոպիան
վարժարաններու վերանորոգու-
թիւնը, որոց առաջինը փլատակ
դարձած էր և վերջինն ալ ար-
դէն նորոգութեան կարօտ է:
Քանի որ վստահ էր իր աւետա-
րանաշունչ խօսքերու տղեցու-
թեան, Ազգին համար աւելի մեծ
բարիք մ'ըրած չէ՞ր ըլլար արդ-
եօք այդ յարկերու շինութեան
համար ծախսել տալով Սպար-
թալեան եղբարց: Հին Հիւանդա-
նոցը մեր աղքատաց և անկելոց
բաւելէ և օտարազգի հիւանդաց
ալ հիւրընկալութեան համար
տեղ ունենալէ զատ, նաև շատ
հեղ սենեակ և անկողին պարապ
կը մնացին օրերով, մինչդեռ ան-
դին՝ վարժարաններն երթալով
փլելու վտանգին ենթարկուելէ
զատ, նաև նեղ կուգային ժողո-
վրդեան մանկիկներուն առջեւ-
ներողութիւն ինդրելով մեր յան-

դըգնութեան, չենք վարանիր բ-
սելու որ, Ազգը ոչ ինչ օդուտ
ունեցած եղաւ մեր Ս. Առաջնոր-
դի աւետարանաշունչ խօսքերուն
այն արդիւնքէն:

Հոփոփոմեան վարժարանի շի-
նութեան համար վերջապէս հան-
գանակութիւն եղաւ ժողովրեան
մէջ, ասկէ կարծեմ չորս հինգ
տարի առաջ, և սակայն տակա-
ւին քանի մամիս է, որ անոր
շինութեան ձեռնարկուեցաւ, Եւ
ինչո՞ւ չորս հինգ տարի առաջ կը
հանգանակուի և այս տարի կըս-
կուի շինութեան — զան զի Պօ-
լիսէն հրամանագիր չէր դար, Եւ
ինչո՞ւ Պօլսէն հրամանագիրը կ'ու-
շանար, — վան զի Կեդրոնական
Վարչութեան կամ լու ևս է ը-
սել Ամեն. Ս. Պատրիարքին դի-
մելու և անոր միջնորդութիւնն
հայցելու դիջում չեղաւ այն ան-
ձէն՝ զոր ընթերցողը կը ճանչնայ:
Բայց վերջապէս այդ դիջումն ե-
ղաւ և Բարձրաշնորհ Պատրիարք
Հօր շնորհիւ անմիջապէս հրա-
մանագիրն ստուցուեցաւ և չորս
հինգ տարի աղջկունք Առաջնոր-
դարանի սենեակնելին հինցունելէ
ետե՛ վարժարանի հիմնարկու-
թեան ձեռնարկուեցաւ:

Երեսափոխանական ժողովոյ յայ-
տադրին մեցերորդ և եօթներորդ
յօդուածներուն պատահանըքիշ
մը վերին ըստածնուս մէջն է ար-
դէն, միայն կը պարտաւորինք
յանուն ժողովրեան շնորհակա-
լութիւն յայտնել Պալեօղեան և
Սպարթալեան էֆէնտիներու, նո-
ցա՝ առ Ազգային արկդն ըրած
նուերներուն, և այս կէտիս մէջ
մեր Ս. Առաջնորդին արժանիքն
ու ժառանքն առ եցուցուելու ժամանակ չէնք
չենք տեսննը:

Յայտագիրն իր ութերորդ յօդ-
ուածով կ'ըսէ. — Ազգն ընդար-
ձակ գերեզմանատուն ունեցա-
քազաքէն դուրս, վայելուչ դիր-
քով, եւրոպական գերեզմանա-
տանց կից, և ազատեցաւ նաեւ
այն ստիպովականութենէ, որով
տեղական կառավարութիւնը ՑԱ-
ՐԻՆԵՐԻ ի վեր կը ՀՐԱՄԱՅՅԻՌ
գերեզմանատունը քաղաքէն հե-
ռացընել և վերջին անդամ կը Ա-
ՊԱՌՆԵՐԻ բոլորովին արգիլել թա-
զումն Ս. Ստեփանոս եկեղեցւոյ
բակին մէջ:

Քաջ է: Կոռուլարունիւնը դարձնե-
րե է չե և նրանցուք և չէրջն անդա-
կը առաջանաւը անհաշտելի չը դանէր
Երեսափոխանութիւնն Ս. Առաջնոր-
դի տէնուն և ինական հովութեան
հետ: Բուքք, կ'աղաջեմ, մեր Ե-
րեսափոխանական պատկառելի ժո-
ղովոյ խորամութիւնն է թէ ոչ
պարզմտութիւնը, որ այդ արտա-
յայտութեամբն ուզգակի կերպով
անտարբերութեան և անշարժու-
թեան հայւ կը դրոշմէ իր Ս. Նա-
խադահին ճակտին վրայ:

Դիտանիք զրած է արդեօք իր
հոչակաւոր Յայտագիրն այդ ու-
թերորդ ամենահոչակաւոր յօդ-
ուածը, որպէս զի իրաւունք տայ
մեր Ս. Առաջնորդը Ներսէս Պատ-
րիարքի հետ համեմատած ատեն,
առաջնորդն համար մեր ըրած գըն-
հատութեան:

Կառավարութիւնը տարիներով
կը հրամայէ և յետոյ կըսպառ-
նայ ութերորդ յօդուածին ժորժ-
ուածնիւնը դործել տալու, և երբ
անտարբերութիւն գանել կար-
ծեցինք Գեր. Մուրատեանցի Ա-
ռաջնորդութեան մէջ՝ ո՞րպէսո՞ծու-

Աւած մը լուծ եղանք յաջս Երես-
փոխանոթեան՝ որ գիտակցաբար
կամ յանդէտս մեր այդ ո՞հութեան-
ծութեան իրաւունք կուտայ, կը
հաստատէ և կը վկայէ զայն իր
կնքով՝ որ կը խոստովանի թէ
հասարակաց տառզջութեան հա-
մար կառալարութեան տարիներէ
՚ի վեր տուած հրամանին առջե
անտարեր կեցուեր է և չէ
դործագրուէր, ՚ի զնաս Հայոց
թաղի բնակչաց, մինչեւ որ Կա-
ռավարութիւնը չէ սպառնացէր
մեր Ս. Առաջնորդին:

Ո՞վ Բրիւտօմ!

Գերեզմանատան քաղաքէն
դուրս փոխագրութիշ կարձեմ եր-
կու տարիի մօտ է: Ս. Առաջ-
նորդն հոն մատուռ մը կանգնել
տապու նպատակը տածած է արդ-
եօք մինչև այսօր, չենք գիտէր,
մի միայն կը կասկածինք և կը
կարձենք թէ տածած չէ, քանի
որ այդպիսի ձեռնարկութեան մը
խօսքն ամեննենին չըկայ: Աւելո՞րդ
կը համարուի արդեօք այս տեղ
մատուռի մը գոյութիւնը, — չը-
կընար ըլլալ, վասն զի քրիստո-
տոնէական կրօնքն ու Եկեղեցւոց
օրէնքը կը արամագրեն զայն:

(Գուլ անդամ)

Ազգային դործոց վերաբերեալ
խնդիրներու մասին ամեն՝ մարդու
կարծեաց ազատութիւնն յարգելու
սկզբան և անկողմնակալութեան դէմ
մեղանչած չըլլալու միակ նպատակաւ
հետեւալ նամակը կը հրատարակենք
թէե, Պ. նամակադրին թախանձա-
նաց վրայ, սակայն կըսիրենք հաւա-
տալ որ Մամուրեան էֆէնսի դէմ
սուել լուսութափութ մը չտածէր
և միայն իր կարծիքը կըլայտնէ, և
մասնաւո՞դ կը կարծենք որ չափա-
զանցութիւն կայ այդ կործեաց մէջ
և չենք կընար հաւատալ որ Մա-
մուրեան էֆէնսի, որոյ առ ազգն
մատուցած ծառայութիւններն ու
իր անդամնջ ջանքն ու վաստակն
յայտնի են ամենուն, շահու կամորեէ
ակնկալութիւն մ'ունենայ: Հետե-
արար ամեն պատասխանառութիւն
Պ. նամակադրին կը թալունջ և մենք
կը յայտարարենք թէ համամիտ չենք
նամակին պարունակութեան:

... Խմբաղիր Արշայ Արքայութան
ազատախօս լլազբոյ,

Ճշմարտասիրութիւնը անմահ
վարդապետութիւն կ'անուանէք
և անոր հետեւիլ արիութիւն:

Այդ արիութիւնը ունեցած էք
դուք Ամեն. Ներսէս Արքեպիս-
կոպոս Վարժապետեանի և Դեր.
Մելք. Արքեպիսկոպոս Մուրատ-
եանցի բարեմամնութիւններն ու
կաթողիկոսական արժանաւորու-
թիւնն բաղդատելու առթիւ. ա-
ռիթ մը զրբ Խփէքնեան էֆէն-
սիի մի յօդուածը կ'ընծայէ:

Հաստ իս՝ այս երեկի մնակա-
վարժը եթէ մեր Ս. Առաջնորդը
սոսկ կաթողիկոսութեան արժանի
ներկայելով բաւականանար՝ այն-
քան մեղադրելի չպիտի լինէր.
ըստ որում նորին Սրբազնութեան
Առաջնորդական շրջանին մէջ հրա-
պարակային գանգատ մը չէ լսած
Հայ աղդը. և եթէ մասնաւոր
յայտարարութիւններ բողոքած
են երբեմն մեր Դեր. Առաջնոր-
դին այն թերութիւններուն գէմ
զոր հանդարտ և անկողմնակալ
ոգւով մը ցոյց կը տաք ձեր թեր-
թիւն մէջ՝ անոնք մի միայն տե-
ղոյս աղդայնոց լսելի եղած են

մինչ դուք դեռ խմբագրական
պաշտօնը չ'ստանձնած՝ Արեւելուն
Մահացած աղատ ասպարեզ գտած է
անչափ գովեստներ չուայլելու Ն.
Սրբազնութեան և անոր փառքն
ու արժանիքն հռչակելու և Պօլ-
սոյ Աղջային մամուլն ալ մէկ
կողմէ անոր արձագանքն եղած
է միշտ և միւս կողմէ մերժած է
երբեմնակի այս տեղէն դրկուած
հակառակ յօդուածներ հրատա-
րակել, ըստ որում գաւառական
Առաջնորդներէն աշքբացները Կ.
Պօլսոյ Աղջ. թերթերու բաժա-
նորդացրութեան մէջ ընտիր պա-
տըսպարան մը գտած են անոնց
յարձակման դէմ:

Այս այսպէս ըլլուլվ իփէք-
ճեան էֆէնտիի յօդուածը սոսկ
պարզամտութիւն մը կրնայինք
համարիլ, բայց երբ Մելքիսե-
դեկ Սրբազնը ոչ միայն կաթո-
ղիկոսութեան արժանի այլ նոյն
խոկ սոյն պաշտօնին համար Ա.
Պատրիարքէն արժանագոյն կը
նկատէ, մեզի ևայլն ևայլն նկա-
տումներու կասկած կ'աղդէ(*)
նկատումներ զօր շատ տարիներէ
՚ի վեր Մեծ. Մամուրեան էֆէն-
տի խոկ ունենալ կը թուի երբ
Ա. Պատրիարքի մէն մի արարքը
բժիշնդրութեամբ կը քննադա-
տէ փոխանակ ընդհանուր Աղջին
հետ շնորհակալիք ու գովեստ
յայտնելու:

Կը ցատինք, զի Աղջին այս
պիսի խորհուն դրսիները հան-
րական շահերն ու օգուտները փո-
խանակ ամեն բանէ վեր դուս-
լու՝ մասնաւոր նկատումներու կը
զսին և ամեն ինչ իրենց կան-
գուստով զը շափառ թէ՛ իրենց
դրութիւնները ընթերցողը պահ-
մը սուրբ և անարատ կը կարծէ
զիրենք և իրովի կը որդողի թէ
ինչո՞ւ Աղջը ուսումնարան, վանք,
Առաջնորդարան, Պատրիարքա-
րան և նոյն խոկ Կաթողիկոսարան
իրենց չյանձներ, վասն զի հոս
Աղջին թշշակը անիրաւի առնող
ծալ և ապիկար ուսուցիչ մը ցոյց
կուտան, հան մատենագարանի
դրեանքը ծախող վեցարաւոր մը,
առղ ին վիճակի մը ժողովուրդը
անձնական շահու համար երկապա-
ռակող Առաջնորդ մը, անդին
աղդ. իրաւասութիւններն պաշ-
տանելու, ազգային այլ և այլ
հաստատութիւնները պայծառա-
ցնելու են, և ն. խնդիրներու ան-
փոյթ ու անխնամ Պատրիարք մը,
մինչ հեռուն էջմիածնայ գանձն
ու հարսութիւնը բոլորովին Ման-
կունիի յանձնող կոմիսիոն մը,
և այս ամեն անարժան պաշտօն-
եայները Աղջին գլուխը անցած
նշանակելէ ետեւ, այնպիսի վը-
տանդներ, այնպիսի փորձանքները
կը գուշակեն որոնց առաջն առ-
նելու կարող պաշտօնեայ, վար-
չութիւն չուեսնելով Աղջին գլու-
խը՝ ցաւ կը յայտնեն և իրենց
դամբանականը կը յօրինեն:

Այս լեզուն գործածած է միշտ
Սրբական Մահացած, և եթէ շատ պա-
րագաներու մէջ արդար տես-
նուած է, շատ մեծ խնդիրներու
մէջ ալ անիրաւ գանուած է, գո-
վելի է իզմիրէն մինչ էջմիածնին
վախճաննեալ Դէսորդ Կաթողիկոսին
վիւնին տակ Մանկունիի գերե-
բը գետել. բայց ծազրելի է թէ

(*) Այժմ ամեն կասկած կըցրուի
իփէքճեան էֆի գերեզմանին առջև
Ծ. Ի.

քամահրելի հոգՄելքիսեղեկի և
Մամուրեան էֆէնափի մէջ տեղը
բարելիշատակ Մակար վարդա-
պետը անտեսել. գովելի է ներ-
սէս Սրբազնէն իր իրաւասու-
թենէն և կարողութենէն շատ
բարձր բաներ պահանջելու փա-
փաքը, ինչպէս ժամանակ մը պա-
հանջեց Արևելան Մամու և Մասէի
արդար զայրոյթը շարժեց. բայց
ծազրելի է թէ քամահրելի մեր
Դեր. Առաջնորդին պարագան-
ցութիւններուն, անշարժութեան,
անդորդութեան և անտարբերու-
թեան վրայ քող մը ծածկելով՝
նորա մի պաշտօնական այցելու-
թիւնը, իրը մի աղոօդուած ձեռ-
նարկութիւն, մի խաչահանդիս
տը իրը հմտալի և գիտական բեմ-
տացութիւն, և մերջապէս մէն
մի գործերն իրաւ և անիրաւ գո-
վեստիւք հրատարակել.

Երբ այսքան հոգ ու խնամ-
ցոյց կուտայ Մամուրեան էֆէն-
ափի մեր Դեր. Առաջնորդին վրայ
այսքան համահրելի սէր մը կը
տածէ նորա անձնն համար. ընդ-
հակառակն կարծես այնքան հա-
կակրութիւն կըզգայ Ազգին միւս
եկեղացականներուն դէմ. Ներ-
սէս Սրբազնն նիկոմիդիոյ Առաջ-
նորդ՝ Կեղը. Վարչութեան կող-
մէն էջմիածին կը զրկուի, Արևե-
լան Մամու մեծ աղմուկ կը հանե-
զի նորին Սրբազնութիւնը Սիսի-
եպիսկոպոս պահակէ կը կախուի.
Հազարումէկ քննադատութիւն-
ներ կ'ընէ և ու անցեալ մը կը
նկարազրէ աւելի ու ու մոթ ա-
պագոյ մը գուշակելով. Մի և
նոյն միջոցին Մելք. Սրբազնն եղ-
եկեղեցական Պատմութեամբը
կը գրագիւ Նրուսադէմոյ վանքին
մէջ. Մամուրեան էֆէնափի նորա-
տաղանդը, ուսումնականութիւնը
և աղատամատութիւնը կը գովա-
րանէ ամեն անգամ որ առիթը
կը պատահի և Ազգին փառաւոր-
ու պայծառ տպագոյ կը խոս-
տանայ անոր ձեռօք. կը յիշեմ
Մամուրեան էֆէնափի սոյն զրա-
թիւնները, և իրը ճշմարիտ հա-
ւատացեր էի սոյդ ամենը. բայց
երբ ժամանակ անցնելով մին
Պատրիարք և միւսը Զմիւռնիոյ
Առաջնորդ կ'ընտրուին, երբ եր-
կուքն ալ տասը տարի կը շա-
րունակեն իրենց պաշտօնները և
առաջնուն սոյն շրջանին մէջ վեհ
գործեր, անձնու իրութիւն, ազ-
գասիրութիւն, անխօնջ ճիգ, ե-
ռանդոյ, վերջապէս ամեն հազօւա-
զիւտ բարեմանութիւն կը փայ-
լին խոկ միւսին շրջանին մէջ. ինք-
նասիրութիւն և անտարբերու-
թիւն կը տեսնեմ և մի և նոյն
միջոցին Մամուրեան էֆէնափի
ինչպէս և իր կուսակիցներ յա-
մառաբար կը պադեն իրենց քա-
րողութեան մէջ, ոչ միտյն ար-
դէն կը փոխեմ իմ համզաւումը
այլ նաև տարբեր տարբեր կաս-
կածներ կ'ունենամ սոյն կուսակ-
ցութեան մասին:

(*) Այժմ ամեն կատկած կըցրուի
Եթէքհան էֆի գերեզմանին առջև,
Մ. Ի.

